ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ՅԱԿՈԲ ԱՆԱԳԶԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

VIII

Գործարանական արդիւնաբերութեան և վաճառականութեան համառօտ տեսութիւնը անելուց յետոյ՝ դառնանք մեզ զբաղեցնող խնդիրներին—գործարանականութեան բարգաւաճմանը և մեր ընկած վաճառականութիւնը իր ցանկալի բարձրութեանը վերածելուն —մի կողմ թողնելով այն հարցը թէ արդիւնագործութեան ո՞ր ճիւղերը ցանկալի է որ զարգանային գործարանական ճանապարհով և ո՞ր ճիւղերը՝ տնայնագործական—հարցեր՝ որոնք բաւականաչափ պարզուած չեն տակաւին։

Որպէս զի գործարանականութիւնը տարածուի, ծաղկի՝ նրան հարկաւոր են մեր կարծիքով.

Նախ՝ դրամագլուխ և ապա՝ գործադրական տեխնիական գիտութիւն, գործին հմտութիւն, նախաձեռնող ոգու և վարելու ընդունակութեան հետ միասին։

Խոշոր և միևնոյն ժամանակ ազատ դրամագլուխներ մեզանում գրեթէ չկան։ Մեր ունեցած տեղեկութիւնների համեմատ՝ եթէ այսօր Թիֆլիսում հրապարակի վերայ լինի որ և է ընկերու-

---

[1]) Տես «Մուրճ» 1893 թ. № 1.

թեան ծրագիր,—ընկերութեան, որի շահաւէտութիւնը երաշխաւորուէր անգամ, և հարկ լինէր ժողովելու մի միլիոն ռուբլու դրամագլուխ—Թիֆլիսում՝ չնայելով նրա հարստութեան հուչակին՝ 100—200 հազարով մասնակցողների թիւը շատ սահմանափակ կը լինէր։ Գալով Բագուին՝ պէտք է ասել, որ ազատ դրամը այնտեղ աւելի ևս հազուադիւտ է և որ մասնաւոր անձինք, նոյն իսկ ընկերութիւններ, ուրախութեամբ վճարում են տարեկան տոկոս 12% և աւելի։

Բայց պակասող այդ խոշոր դրամագլուխների փոխարէն մենք ունինք վաճառականների մօտ շատ մանր դրամագլուխներ՝ զետեղուած այնպիսի ձեռնարկութիւններում, որոնք, ինչպէս վերև տեսանք, արդէն գոյանում են յետադիմութեան—եթէ չասենք քայքայման—շրջանի մէջ. և այդպիսով այդ ձեռնարկութիւնները ոչ թէ միայն մի հաստատուն, շօշափելի շահ չեն տալիս իրանց տէրերին, այլ նոյն իսկ ոչ մի երաշխաւորութիւն չեն ներկայացնում իրանց մէջ զետեղուած դրամագլուխները հետզհետէ սպառման վտանգից զերծ կացուցանելու։

Տեխնիկներ, մասնագէտներ—թէև ոչ ամեն արդիւնաբերութիւններից—մեզանում կան, բայց նրանք թէ սեփական միջոցների սղութեան և թէ դրամատէրերի անտարբերութեան պատճառով իրանց գիտութեան գործադրութիւն քիչ գտնելով մեզանում՝ կամ նիւրւել են ուրիշ զբաղմունքների, կամ շրջում են անգործ։ Վերջապէս դրանց պատրաստելը կամ առժամանակ դրսից բերելը մեծ դժուարութիւններ չունի։

Գալով նախաձեռնող ոգու և վարելու ընդունակութեան՝ չի կարելի ասել, որ մեզ պակասում են դրանք։ Այն գործարանական և առևտրական հաստատութիւնները, որ այժմ գոյութիւն ունին մեզանում և որոնք ստեղծուել են անհատական ոյժերի շնորհիւ, առանց պետական որ և է օժանդակութեան—ապացոյց են նախաձեռնող ոգու ներկայութեանը, իսկ այդ հաստատութիւններից նրանք, որոնք բարեկարգ վիճակի մէջ են—վկայ են, որ մեր մէջ ևս կան վարելու ընդունակ անձնաւորութիւններ։

Այստեղ չի կարելի լռութեամբ անցնել երկու հայերի վերայ, որոնցից մինը (Լոռիս-Մելիքով) Մոսկվայում 1855 թուին հիմնեց

մեռաքսի թելի առաջին մանարանը, որը յետոյ 60-ական թվերին (Յակոբ Վարդազարեանի ձեռքով) փոխադրուեց Ներքին-Ադուլիս գիւղը, և միւսը (Մկրտիչ Մելիքենցով) Մոսկուայում բաց արաւառաջին «ալիւշի» գործարանը։

Եւ այսպէս, մեր երկրի հում բերքերը մշակելու և նրանց, իբրև գործարանական արդիւնք, տեղական ազգաբնակութեանը մատակարարելու համար մենք ամեն ինչ ունինք, բացի գործարաններից։ Քննենք այժմ այն պատճառները, որ մեզ խանգարում են լրացնել այդ պակասը և տեսնենք թէ որքան հնարաւոր է դրա իրագործումը։

1) Խոշոր դրամագլուխների բացակայութիւնը։ Քանի որ, ինչպէս տեսանք, խոշոր դրամատէրեր մեզանում սակաւաթիւ են և եղածները գրեթէ ամենք խրուած են զանազան ուրիշ ձեռնարկութիւնների մէջ (նաւթային արդիւնաբերութիւն, արքունի կապալներ, բանկային հաստատութիւններ և այլն). բացի սրանից, քանի որ իսկապէս անհեռատեսութիւն կը լինէր որ և է դրամատէրի կողմից իր ամբողջ կարողութիւնը մոցնել մի դեռ ևս անծանօթ, անփորձ ձեռնարկութեան մէջ—մեզ մնում է գործել հաւաքական ուժով, ընկերութիւններով։ Իսկ մեր ընկերութիւնները ինչպէս են կազմուում։—Ըստ մեծի մասին առանց մշակուած, հիմնական և իրաքանչիւր անդամի ու կառավարչի պարտաւորութիւններն և իրաւունքները սահմանող կանոնների։ Ուստի՝ հէնց որ տեղի է ունենում որ և իցէ ձախորդութիւն—փոխանակ անկողմնապահ կերպով քննելու իրերի դրութիւնը, որոնելու վնասի իսկական պատճառը, ուղղելու կատարուած սխալը և աւելի աչալրջութեամբ առաջ տանելու գործը—ընկեր ընկերի վերայ է բարձում յանցանքը, իսկոյն սկսւում է անբաւականութիւն, վէճ և ահա լուծուեց ընկերութիւնը։ Նուիրուայ առևտրական ընկերութիւնը—որի մասին վերև խօսք եղաւ—այդ կերպով կազմուած ընկերութիւններից մէկն էր. ոչ մի կանոնադրութիւն, ոչ մի հրահանգ չը կար. ամեն ինչ կախուած էր անփոփոխ կառավարչի բարի կամքից, որը—ի դէպ ասենք—ընկերութեան բախտից վերին աստիճանի շիտակ և անշահասէր մարդ էր. նրան իբր թէ օգնում էին խորհրդով ընկերութիւնից ընտրուած 4 անդամներ։ Քանի որ ընկերութիւնը տալիս էր 40—60%

շահ — ամենքը գոհ էին. իսկ երբ վերայ հասաւ 60-ական թուերի վերջերում տեղի ունեցող կրիզիսը — իսկոյն բարձրացան տրտունջներ, աղմուկներ, որոնց հետևեց բաժանումն։

2) Գործի ձեռնարկումն առանց բաւականաչափ դրամագլխի, որը հնարաւորութիւն չէ տալիս ձեռնարկողներին գործը այնքան ընդարձակելու, որ իրանց ապրանքը շուկայում դնի և յատկութեան կողմից արտաքին մրցումների դիմանայ։ Բացի դրանից՝ այդպիսի գործարանատէրերը միշտ ստիպւած են լինում թանգ տոկոսներ վճարել անհրաժեշտ դրամը ձեռք բերելու համար, որը իր վնասակար ազդեցութիւնը անում է նրանց անդիմադրութեան գների վերայ։ Այսպիսի հանգամանքներում եթէ մի արտաքին ձեռք օգնութեան չէ հասնում — նրանց բանը պրծած է։ Բարոն Կուչենբախ Բորչալուի դաւառում 1863 թուին հաստատելով իր 12 հազար ռուբլիովը հիմնում է պանրի գործարան շէյցարական դրութեամբ։ Բայց շուտով նկատելով իր անկարողութիւնը՝ մի քանի անգամ դիմումներ է անում պետութեան և 26 հազար ռուբլի ներւած պարքն ու 27 հազար ռուբլի փոխատուութիւնը հազիւ թէ բաւական են լինում նրան կարգի դնելու իր գործարանը։ [1])

3) Ձեռնարկութեան անհեթեթ լինելը կամ ըստ ծաւալին, որը չներելով գործատէրերին որ և իցէ ներդործական դեր ստեղծել իրանց համար արդիւնաբերական և առևտրական ասպարիզում՝ նրանց խաղալիք է շինում ազդեցիկ մրցակիցների և շրջապատող ընթացիկ հանգամանքների ձեռքում (այս վիճակն ունէին Բագւում կէրոսինի այն փոքրիկ գործարանատէրերը, որոնք խոշորների հետ միասին միևնոյն ասպարիզում գործել չկարողանալով՝ դադարեցրին իրանց գործառնութիւնը). կամ ըստ կարևորութեան, որը ոչ մի պակաս չլրացնելով ժողովրդական տնտեսութեան մէջ՝ ոչ մի առաջադիմութեան հաւանականութիւն չէ ներկայացնում ձեռնարկողներին։ Օնիկով, Զուբալով և ընկ. 1883 թ. Գերմանիայից բերել տուին կառարեղադործւած, նաւթով վառւող հնոցներ իրանց հացագործ վարպետներով, բայց որովհետև Թիֆլիսի

---

[1]) Обзоръ фабр. и завод. Тифл. губ. Гулишамбарова 1888 г.

աղգաբնակութիւնը կարիք չունէր իր սովորական հացը թողնելու և իր ստամոքսը ուրիշ հացի ընտելացնելու՝ թէև դա մի փոքր էժան ևս լինէր, ուստի ընկերութեան հացը՝ նրա բոլոր ջանքերին հակառակ՝ ընդունելութիւն չգտաւ [1]։

4) Անպատճառ մի մեծ, մի փայլուն գործի ձեռնարկելու սէրը։ Բացում կան նաւթային արդիւնագործութեան հետ առնչակից բազմաթիւ մանր զբաղմունքներ, աւելի ապահով և աւելի շահաւէտ միջին դրամատէրերի համար քան թէ նաւթային արդիւնաբերութիւնը. այսպէս են՝ հորերի փորելը, փայտեայ և թիթեղեայ արկղների շինելը, տակառագործութիւնը և այլն. բայց սրանք բոլորն էլ օտարների ձեռքին են—մենք սիրում ենք նաւթային գործում կամ հորատէր, կամ կէրոսինի գործարանատէր լինել, կամ երկուսն էլ միասին։

5) Գործնական հասկացողութեան և ըմբռնողութեան պակասութիւնը՝ տեղի անսխալ ընտրութեան վերաբերմամբ։ Շմիդտ 1856 թ. պետութեան օգնութեամբ Թիֆլիսում Կուր գետի վերայ սալքում է 300 հազար ռուբլի նստող ջրաղաց, բայց յետոյ նկատում է, որ լաւ տեղ չէ ընտրել և որ գետից օգտուելը իրան շատ թանգ է նստում՝ ամեն տարի նորանոր ծախքեր պահանջելով ջրի հոսանքի կապրիզներից ազատ մնալու համար։ Շմիդտ մնանկանում է, իսկ նրա ջրաղացը՝ շոգէաղացի փոխուած՝ այժմ Թամամշեւին է պատկանում [2]։ Երկրորդ օրինակ. ինժեներ-տեխնոլոգ Կանդուրալով Արտազովի հետ միասին 1878 թ. Թիֆլիսում բաց արին կաւեղէն արդիւնքների գործարան։ Երբ ամեն ինչ շինուած վերջացած էր՝ յետոյ նկատեցին որ տեղի ընտրութիւնը անաջող է—մօտակայքում ոչ մի տեղ լաւ տեսակի կաւ չկայ։ Այդ գործարանը փակուեց 1883 թ. մեծ դեֆիցիտով [3]։

6) Հիմնողների զուրկ լինելը անհրաժեշտ գործնական գիտութիւնից և բոլոր յոյսը միայն տեխնիկների վրայ դնելը։ Իշխ. Էրիստով 1841 թ., պետական նպաստով բաց է անում սեփական կալուածքում ապակիի գործարան։ 30

---

[1]) [2]) [3]) Обзоръ Фабр. и Завод. Тиф. губ. Гулнамбарова 1888.

տարի շարունակ ի վնաս իր յամառ տիրոջ գործելուց և այդքան միջոցում մի կարգին ապրանք դուրս բերել չկարողանալուց յետոյ՝ երբ Իշխանի մահուամբ գործարանը 1872 թ. կապալով անցնում է Էպշտէյնի ձեռքը—յայտնւում է, որ նախկին տեխնիկը իր քթի տակ (300 քայլի վրայ) եղած պատուական աւազը չէր նկատել, այլ այդ նիւթը, այն էլ ստոր տեսակը, հեռի տեղից էր բերել տալիս [1]։ Ուրիշ օրինակ. Ղամբարով և Սահակով բաց են անում Գորիում կաշի գործարան 70-ական թուերին. բայց որովհետև իրանք գործից հասկացողութիւն չունէին և իրանց բոլոր յոյսը դրել էին գերմանացի վարպետների վերայ—շարունակել չկարողացան [2]։

7) Ցատուկ կառավարչի չը լինելը, որ պատահում է սակաւաթիւ անդամներից բաղկացած ընկերութիւններում, երբ ամեն մէկ անդամ՝ կարգադրութեան մէջ խառնելով՝ տրւում են գործակատարներին՝ յաճախ իրար հակասող՝ հրահանգներ, անտարակոյս, ի վնաս ընդհանուր գործի։ Այսպիսի դէպքերի շատ օրինակներ այս տողերը գրողին յայտնի են ազուլեցիների առևտրական ընկերութիւնների կեանքից։

8) Անպարտաճանաչ և անազնիւ կառավարիչը, որը աւելի սեփական շահերի ու անձնական հանգստութեան վերայ է մտածում, քան թէ իր կառավարութեան յանձնուած հաստատութեան վրայ, և մատերի արանքով է նայում տեղի ունեցող թանգ գնումների, անշահ վաճառումների, շռայլ և աւելորդ ծախքերի, գործակատարների զեղծումների և կեղծ հաշուետուութիւնների վերայ, որոնց հետևանքը յայտնի է։

9) «Եօլայ տանելու» սկզբունքը,—մի վնասակար սկզբունք՝ որ առաջնորդում է մեզ մեր ամեն ձեռնարկութիւնների մէջ։ Կառավարիչը, տեխնիկը, մեքենավարը, հաշուապահը, վարպետը, գործակատարը, բանւորը մի քիչ պակաս էլ հասկանան իրանց գործը—հոգ չէ, եօլայ կը տանեն, միայն թէ էժան գնով վարձեն։

10) Գործողութեանց նախագծի և ծախուց նախահաշուի բացակայութիւնը, որի շնորհիւ հաստատութիւնը ընթանում է միշտ ենթարկուած անղեկ և անկողմնա-

---

[1]) [2]) Обзоръ Фаб. и Завод. Тип. губ. Гулишамбарова 1888 г.

ցոյց նաւի պէս՝ հանգամանքների բերմունքին, կամ վարիչների կամայականութիւններին ու անգիտակցական սխալներին։

11) Կանոնաւոր հաշիւ բացակայութիւնը, որի շնորհիւ հաստատութիւնը ամեն ժամանակ հնարաւորութիւն չէ ունենում տեսնելու իր ճշգրիտ պատկերը, տեղեկանալու իր իսկական վիճակի մասին։

12) Օժանդակող գործարանների պակասութիւնը։ Ցայտնի է, որ շատ զանազան գործարաններ կապ ունին միմեանց հետ—մէկը լրացնում է միւսի պակասը։ Արդ՝ քանի որ մեզանում գործարանները չնչին թւով են, շատերը բնաւ չը կան և եղածները օրինակ, մեքանիկական գործարանները, շատ պակասաւոր են, —այս պատճառով աշխատութեան բաժանումն տեղի չէ ունենում մեր մէջ և մեր գործարանատէրերը հարկադրւած են լինում թէ մէկ գործարանի տեղը երկուսը բանալու—օրինակ Միրզոյեվը, կտաւի գործարանը բանալու համար, առաջ պէտք է բամբակի մանարան բաց անէր—և թէ օժանդակող բաժանումներ բանալու—օրինակ կտաւի գործարանին կից՝ փականագործութեան բաժանումն։—Լինում են դէպքեր, երբ գործարանատէրերը ստիպւում են ամիսներով դադարեցնել գործը, մինչև մի ինչասւած մեքենայ կարկատել տան երկրից դուրս մի հեռաւոր գործարանում։

13) Առ հասարակ աշխատաւոր ձեռքերի և մասնաւորապէս վարպետ գործաւորների սակաւութիւնը և թանգութիւնը մեզանում—հանգամանքներ, որոնք ոչ թէ միայն անհնար են կացուցանում ներմուծւող ապրանքների հետ մրցումը՝ թանգ նստեցնելով տեղական արդիւնքները, այլև բանւորների գործադուլների դէպքում ամիսներով գործարանը փակելու և հեռի տեղերից վարպետ բանւորներ բերելու հարկին մէջ են դնում գործարանատիրոջ։ Այսպիսի մի դէպք էր, որ ստիպեց Միրզոյեւին Լոռից գործաւորներ բերել, թէև դրանք ոչ էժան են նստում և ոչ երկար մնում են մեր երկրում։

IX

Ուշի ուշով քննելով մեր այստեղ մէջ բերած պատճառները՝ մենք գտնում ենք, որ հնարաւոր է վերացնել նրանց և գործարա-

նական գործի համար ստեղծել գոյութիւն ունեցողներին հակառակ պայմաններ։

Մեր կարծիքով այդ պայմանները կարող են հետևեալները լինել՝

1) Բարեկազմ ընկերութիւններ։

2) Բաւականաչափ դրամագլուխ։

3) Կարևոր, շահաւէտ, թէև ոչ միշտ փայլուն ձեռնարկութիւններ։

4) Անսխալ ընտրութիւն տեղի։

5) Գործագէտ, շիտակ, ըստ արժանոյն վարձատրուած կառավարիչներ, տեխնիկներ, հաշուապահներ, գործակատարներ և այլն։ Աւելի լաւ է՝ եթէ սրանք ընկերներից լինեն, կամ գոնեա՝ եթէ սրանց սեփական շահերը ուղղակի կախուած լինեն հաստատութիւնների զուտ շահերից։

6) Որոշ, անթերի ծրագիր։

7) Կանոնաւոր հաշուապահութիւն։

Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքներին, որ մեզանում օժանդակող, միմեանց պակասը լրացնող գործարաններ չը կան և աշխատող ու վարպետ ձեռքերը թանգ են—դրանք ժամանակի հարցեր են և գործարանական գործի ծաղկելովը՝ ինքնին կ ըվերանան։ Գործաւորների սակաւութեան և օրավարձի թանգութեան պատճառը զլխաւորապէս պէտք է որոնել ընտանեկան կազմակերպութեան մէջ։ Ցայտնի է որ ամեն տեղ օրավարձի իջեցնողը գործաւորուհին է. իսկ մեզանում իդական սեռը, մանաւանդ հարեմական կեանքով սնուած թրքուհին, իրան, որքան կարելի է, հեռի է պահում գործարանական աշխատութիւնից, կամ զուցէ ստիպուած է այդպէս անել։ Բայց պէտք է աւելացնենք, որ իրերի այդ վիճակը, որի օրինակները մենք տեսնում ենք Ղարաբաղում, Նուխիում, Օրդուբաթում, տեղական չէ. և եթէ մենք կարողանանք ընտրել տեղը, հիմնել մեր գործարանը կենտրոնում—մենք ոչ գործաւորների պակասութիւն կը զգանք և ոչ թանգ օրավարձ կը վճարենք։

Վերջացնելով գործարանների մասին մեր ասելիքը՝ չենք կարող չնկատել, որ մի ժամանակ ամենքը այն կարծիքի էին, թէ

շոգիի ոյժը մտնելով արդիւնաբերութեան մէջ և ստեղծելով այժմեան ընդարձակ, տեղ տեղ ահագին գործարանները՝ պիտի իսպառ կլանէ, մեռցնէ տնայնագործութիւնը։ Բայց փորձերը ցոյց տուին՝

1) Որ միայն շատ ընդարձակ գործարանների արդիւնքները մեքենաների շնորհիւ էժան են նստում տնայնագործութեան արդիւնքներից.—ուրեմն որ տնայնագործութիւնը դեռ կարող է գոյութիւն ունենալ։

2) Որ գործարանականութիւնը ստեղծում է դրամագլխի տիրապետութիւն աշխատանքի վերայ. մի բռնութիւն, որի դէմ աշխատանքի ներկայացուցիչները միայն գործադուլներով են բողոքում.—ուրեմն որ տնայնագործութիւնը, որը մի յայտնի չափով երաշխաւորում է բանւորների անկախութիւնը դրամագլխից, արժանի է ամենայն խրախուսանքի և ցուցմունքների ինտելիգենտ անձինքների կողմից։ Վերջին տարիներս նոյն իսկ պետական շրջաններում միջոցներ են ձեռք առնւում տնայնագործութիւնը զարգացնելու, ինչպիսի են՝ փոխատու բանկեր, ճնայուն ցուցահանդէսներ և այլն։

X

Վերև մենք ծանօթացանք մեր վաճառականութեան ներկայ վիճակի հետ,—այստեղ նրա պահանջած փոփոխութիւնների մասին խօսելուց առաջ՝ տեսնենք թէ ինչ պիտի լինի վաճառականութեան դերը ժողովրդական տնտեսութեան մէջ։

Վաճառականը պէտք է միջնորդ լինի արտադրողի և սպառողի մէջ—եթէ դրանք հնար չունին տեղի հեռաւորութեան, ժամանակի սղութեան, դրամի պակասութեան, կամ այլ պատճառներով ուղղակի յարաբերութեան մէջ լինել միմեանց հետ։ Քանի որ՝ այդ միջնորդների թիւը հարկաւոր չափից աւելի չէ—որպէս զի գոյութեան կռիւը ստիպէ նրանց զանազան զեղծումներ ու խարդախութիւններ գործել դիմացիների հետ մրցելու համար.—ուրեմն, քանի որ նրանք շիտակաբար են կատարում իրանց պաշտօնը—համեմատաբար մի ինչին վարձատրութեամբ և մեծամեծ ռիսկներով մատուցանում են մի մեծ ծառայութիւն տեղական ազգաբնակութեանը—նրանք ամենայն պատուի և շնորհակալութեան արժանի են վերջինի կողմից։

բացի սրանից՝ վաճառականը կարող է նաև մեծապէս նպաստել գործարանական արդիւնաբերութեան զարգանալուն՝ բաժանելով գործարանատիրոջ հետ աշխատութիւնը։ Վաճառականը կարող է, օրինակ, գնել բամբակը գիւղացուց, բերել և վաճառել մանարանատիրոջ՝ վերջինիցս ի փոխարէն և յապահովութիւն վերցնելով նրա մանածը նրա հաշուին յանձնավարձքով վաճառելու։ Ապա այդ մանածը վաճառելով կտաւի գործարանատիրոջ՝ վերցնել նրանից վերոյիշեալ պայմաններով նրա կտաւը։ Յետոյ այդ կտաւը վաճառելով չթադործին՝ վերցնել նրանից նոյն պայմաններով նրա չիթը և այլն։

Եթէ մենք կարողացանք ուղիղ սահմանել վաճառականութեան կոչումը ժողովրդի տնտեսական բարօրութեան տեսակէտից,—այդ կոչման վերածելու համար մեր արդի ընկած վաճառականութիւնը—բացի վերացնելուց այն պակասութիւնները, որոնք ընդհանուր են ամեն տեսակ ձեռնարկութիւնների և որոնց վերայ մենք մատնանիշ արինք գործարանականութեան մասին խօսելիս—հարկաւոր է, մեր կարծիքով, որ հեռանան ասպարիզից բոլոր աւելորդները—մանաւանդ նոր սկսողները, անընդունակները, դժգոհները, որոնք իսկապէս խանգարում են միւսներին—միացնեն իրանց դրամագլուխները, կազմեն ակցիոնէրական ընկերութիւններ և ձեռնարկեն գործարանական ու գիւղատնտեսական արդիւնաբերութիւնների, մինչև անգամ նաև վաճառականութեան, եթէ դրանով մի պակաս ունին լրացնելու, ինչպէս մեր վերև յիշած աշխատութեան բաժանումն է գործարանատիրոջ հետ։

Երբ այդպիսով, աւելորդների հեռանալով, շուկայում կը մնայ վաճառականների միայն անհրաժեշտ քանակութիւնը,—այն ժամանակ մի կողմից նրանք՝ վաճառականները՝ ապահոված լինելով իրանց շահերի մասին՝ ստիպուած չեն լինիլ խարդախութիւններ գործելու, որպէս այժմ, իրանց ապրուստը հայթհայթելու համար, և միւս կողմից հասարակութիւնը, մանաւանդ մեր ինտելիդենցիան, որ այժմ այնքան արհամարհաբար է վերաբերում նրանց, կը ստիպուի ճանաչել և խոստովանել վաճառականների ծառայութեան կարևորութիւնը։

Իսկ այն վաճառականների մասին, որոնք առանց դրամագլխի,

միայն պարտքով, վարկով են գործ տեսնում և որոնց թիւը դժբաղդաբար քիչ չէ մեզանում—խօսել աւելորդ ենք համարում. նրանք դրանով միայն վտանգի տակ են դնում իրանց պատիւը և ինքնաներ պատճառում թէ իրանց վարկ բացողներին և թէ դրամատէր ու շիտակ վաճառականներին։

Վաճառականութեան մասին մեր ասածներից այսքանը իսկապէս վերաբերում է նրա տեսական, իդէալական կողմին. բայց՝ եթէ մեր առաջարկած միջոցները գործնականապէս անիրագործելի են,—ցանկալի կը լինէր գտնէ, որ վաճառականները բռնէին այն ճանապարհը, որի վերայ գտնում են Եւրոպայի առևտրականները։ Նրանք կամ յանձնակատար են, որոնք ընդունում են ամեն տեսակ ապրանքների վաճառելու և գնելու յանձնարարութիւններ ի հաշիւ յանձնատուների. (սրանք ըստ մեծի մասին և աւանդառու են, այն է իրանց ընդունած ապրանքի դէմ կանխավճար տուող, ինչպէս վերև ասացինք). կամ ներկայացուցիչ գործակալ որ և է գործարանի, որոնք նպաստում են իրանց դրամով գործարանտիրոջը և նրա արդիւնքները վաճառում։

IX

Մնում է մեզ երկու խօսք ևս ասել արդիւնաբերական և առևտրական ընկերութիւնների կազմելուն արգելք եղող պատճառների մասին։

Թէ մենք հասկանում ենք միացած ուժով գործելու օգուտը—դրան աւելի պարզ ապացոյց չէ կարող լինել, քան թէ այն բնորոշ խօսքերը, որ ասում էին մի քանի տարի առաջ մի նախագծուած առևտրական ընկերութեան նախաձեռնողները այս ու այն վաճառականի դիմելով՝

«Եղբայր, ասում էին նրանք, հէնց այն խնայողութիւնը՝ որ մեզանից իւրաքանչիւրը ունենալու է այս ու այն քաղաքի ծախքերում և այն տարբերութիւնը գների մէջ, որ մենք ունենալու ենք միմեանց մրցակից չը հանդիսանալուց ապրանքի թէ գնման և թէ վաճառման քաղաքներում—եթէ մեզ մնան՝ բաւական է»։

Թէ՝ մենք ձգտումն ունինք ընկերութիւններ կազմելու—դրան ապացոյց են այն բազմաթիւ ընկերութիւնները, որոնք ծնունդ են

առել վերջին երկու-երեք տասնեակ տարիներում, թէև նրանց ամենամեծ մասի կեանքը շատ կարճատև է եղել և վախճանը՝ ողբալի։

Ուրեմն՝ մենք թէ ըմբռնում ենք ընկերութիւնների օգտաւէտութիւնը և թէ ձգտում ենք նրանց կազմելու. բայց այսու ամենայնիւ ընկերական գործը մեզանում առաջ չի գնում և դրա պատճառը, բացի վերև մէջ բերածներից,—որոնք վերաբերում էին արդէն կազմուած ընկերութիւնների լուծուելուն—մենք գտնում ենք և հետևեալ՝ ընկերութիւնների կազմուելուն արգելք եղող՝ պայմանների մէջ.

1) Լուծուած և լուծուող անբարեկազմ ընկերութիւնների վհատեցուցիչ օրինակը։

2) Որովհետև ընկերութիւնները յաճախ վնաս են մատնաւորների շահերին,—ուստի վերջիններիս մէջ միշտ գտնում են զանազան մեքենայութիւններ լարող, այս ու այն անձի և նրա գործունէութեան վերայ ստեր գցող անհատներ, որոնց ինտրիգաների և կազմող ընկերութեան անդամների պարզամտութեան և անինքնուրոյնութեան շնորհիւ նախաձեռնողների բոլոր ջանքերը ընդունայն են անցնում։ Կախում և Զաքաթալում 3—4 տարի առաջ կազմուած ճոթավաների ընկերութիւնների նախաձեռնողները թէև կարողացան՝ զանազան մեքենայութիւնների հակառակ՝ գլուխ բերել իրանց ընկերութիւնները, բայց նրանցից առաջինը՝ Կախինը միայն 2 տարի գոյութիւն ունեցաւ, իսկ երկրորդը՝ Զաքաթալինը հաղիւ թէ պահւում է տակաւին՝ ընկերութեան խիստ պայմանների շնորհիւ։

3) Մեր խոշոր վաճառականները չեն ախորժում, որ մանրերն իրանց հետ ընկերանան, իրանց հաւասարուեն։

Կարծեմք այս հանգամանքը շատ լաւ բացատրած կը լինի՝ բառ առ բառ մէջ բերելով մի՝ իբր թէ խոշոր վաճառականի խօսքերը իրանից ստոր համարուողի վերաբերմամբ.

«Թող, ասում էր նա, դատարկ կարասը զարկուի լի կարասին—տեսնենք թէ ո՞րը ողջ կը մնայ»։

4) Մեր խոշոր վաճառականները եթէ համաձայնութիւն էլ յայտնում են մասնակցելու որ և իցէ ընկերութեան—նրանց առաջին և անփոփոխ պայմանը այն է լինում, որ գլխաւոր և գէր պաշ-

ոնների վերայ իրանք և իրանց ազգականները նշանակեն կանխապէս։

5) Մտաւոր զարգացման, կրթութեան և սկզբունքի բացակայութիւնը ամենամեծ խոչընդոտն է, ինչպէս ամեն հասարակական, նոյնպէս և ընկերութիւնների կազմակերպութեան գործում։ Անկիրթ մարդիկ առհասարակ չեն ախորժում սահմանափակել իրանց բացարձակ իրաւունքները, ճանաչել իրանց պարտաւորութիւնները, խոստովանուել ընկերոջ իրաւունքը և յարգել ուրիշի կարծիքը։ Բացի սրանից—տգիտութիւնը կասկածոտ է. տգէտը երթէ կուրաբար չի հաւատում—նա միշտ կասկածելով է վերաբերւում դէպի ամեն ինչ, ամեն անձնաւորութիւն, ամեն երևոյթ։ Նա գիտակցական հաւատ չունի, նա վստահութիւն չունի։

Մեր այստեղ մէջ բերած՝ ընկերութիւնների կազմելուն արգելք եղող՝ պատճառները թէև աւելի դժուար վերացնելի, դժուար դարմանելի են, քան թէ ընկերութիւնների անյարատևութեան և լուծելուն նպաստող պատճառները, որոնց մասին վերև խօսեցինք—որովհետև սրանց արմատները գտնւում են մարդկանց իրանց մէջ, իրանց մտի և արիւնի մէջ,—սակայն այս հանգամանքը մեզ չպիտի վհատեցնէ. նախ՝ որ կան մեր հասարակութեան մէջ բաւական թւով այս հակահասարակական ախտերից ազատ մարդիկ, որոնք և, այսպէս թէ այնպէս, կարողացել են հիմնել այն՝ թէ հանդուցեալ և թէ կենդանի՝ ընկերութիւնները, որ մեզ յայտնի են և ապա՝ դրանք, այդ պատճառները, իբրև անկրթութեան հետևանք, ժամանակաւոր են միայն։